ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Գեղանիստի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի

տնօրենի **2026** թվականի ապրիլի 2-ի **N** 11-Ա հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները /չափորոշիչները/ | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղերը/նյութերը/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի (0. 5 դրույք)** | Որակավորման պահանջները՝<br>հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝<br>1) միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ.<br>1) Ընդհանուր պահանջները.<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է՝<br>1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2) իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) Դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ<br>2) Դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից<br>3) Տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը<br>4) Դատապարտվել է հանցագործության համար և | 1) Դիմում ( ձև 1 )<br>2) Անձը հաստատող փաստաթուղթ<br>3) Կրթության մասին փաստաթուղթ ( դիպլոմ)<br>4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/<br>5) Ինքնակենսագրություն<br>6) Մեկ լուսանկար՝ 3*4չափի<br>7) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ |

Сканировано с CamScanner

| | | | |
|---|---|---|---|
| | ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br>բ. նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի, անատոմիայի, մարզագործիքների վրա ուսուցման մեթոդիկայի հիմունքներին, | դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի , երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար | 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական կցագրման վկայական<br>9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ( դրանց առկայության դեպքում):<br><br>**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով** |
| **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| Վայրը՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայք, գյուղ Գեղանիստ, 1փ. , 6/1մանկ. , օրը՝ 2026 թ մայիսի 5-ին, ժամը՝ 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Գեղանիստի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, հեռ. 0933621479: Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի <<22>> հոկտեմբեր 2024 թվական N 1981-Ա/2 հրաման ):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից | | 2026 թվականի ապրիլի 2-ից մինչև 2026 թվականի ապրիլի 29-ը ներառյալ |

Сканировано с CamScanner